ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.07.2020թ.

Մ Ի Ջ Ա Ն Կ Յ Ա Լ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից փորձաքննություն նշանակելու վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.06.2020թ. թիվ 26/26/9761-2020 գրությամբ «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար «Դյուրակիր համակարգիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ն:

- Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, «Դյուրակիր համակարգիչների» համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

- առնվազն 15.6,
- կետայնությունը՝ առնվազն 1920x1080,
- պրոցեսոր՝ առնվազն 2.1GHz, արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.9GHz,
  առնվազն-
  2 Cores,
  4 Threads,
  4MB Smart Cache,
- օպերատիվ հիշողություն՝ առնվազն DDR4 8GB SDRAM,
- հիշողություն՝ առնվազն SSD 128GB (M.2),
- ներկառուցված Card reader,
- WiFi,
- ներկառուցված LAN,
- Bluetooth,

- առնվազն -
  2xUSB 2.0,
  1xUSB 3.0 Type A,
  1xUSB 3.1 (Type-C) Gen 1,
- ներկառուցված HDMI,
- DVD-RW (արտաքին),
- Web տեսախցիկ,
- ներկառուցված խոսափող,
- 1x աուդիո բնիկ,
- ENERGY STAR,
- Windows 10 Professional 64bit (ակտիվացված, անժամկետ),
- պայուսակ (15.6"),
  երաշխիքը՝ 3 տարի

- Ընկերության կողմից Ընթացակարգի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, «Դյուրակիր համակարգիչների» համար առաջարկվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը.

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	Դյուրակիր համակարգիչներ Lenovo ThinkBook 15-IIL, P/N: 20SM003TRU; Էկրանը՝ 15.6", IPS, կետայնությունը՝ FHD, 1920x1080, Պրոցեսորը՝ Intel Core i5-1035G1, 1.0GHz, արագացնելու հնարավորությամբ՝ մինչև 3.6GHz, 4 Cores, 8 Threads, 6MB Smart Cache; Օպերատիվ հիշողություն՝ DDR4 8GB SDRAM 2666MHz; Հիշողություն՝ առնվազն SSD 256GB (M.2 2242 NVM), Ներկառուցված Card reader (4-in-1 media reader (MMC, SD, SDHC, SDXC)), WiFi 802,11ax, ներկառուցված LAN, Gigabit Ethernet; Bluetooth 5.0, Պորտեր՝ առնվազն - 2x USB 3,1 Gen 1, 1xUSB-C 3.1 Gen 1, 1xUSB-C 3.1 Gen 2, ներկառուցված HDMI 1.4, DVD-RW (արտաքին), Lite-On ES-1 Web տեսախցիկ, HD 720p; ներկառուցված խոսափող, Dual array digital; 1x աուդիո բնիկ, headphone/microphone combo jack; ENERGY STAR, Windows 10 Professional 64bit (ակտիվացված, անժամկետ), պայուսակ (15.6"), 15.6" PC Pet 600D, սև, նեյլոնե, (PCP-A1115BK) երաշխիքը՝ 3 տարի

Այսպիսով՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 06.12.2018թ. N 600-Ն հրամանով հաստատված Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

գործունեության կարգի 17-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով «ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերի բազմակողմանի ուսումնասիրելու անհրաժեշտությունը՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«ՔՈՄՓ.ԷՅԷՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ՍՑ-ՆԳ-2020/144 ընթացակարգի շրջանակներում նշանակել փորձաքննություն՝ ստորև շարադրված հարցի շրջանակներում, և փորձաքննության իրականացումը հանձնարարել «Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ-ի փորձագետներին:

Խնդրի պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցը.

Ուսումնասիրել կից ներկայացվող Ընկերության կողմից հայտի Հավելված 1.1-ով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը և ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար «Դյուրակիր համակարգիչների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 1-ին չափաբաժնով սահմանված տեխնիկական բնութագիրը և տալ եզրակացություն՝ արդյոք Ընկերության կողմից ներկայացված ապրանքի տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Պատվիրատուի կողմից «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-20/34» ծածկագրով ընթացակարգի հրավերով «Դյուրակիր համակարգիչների» ձեռքբերման համար սահմանված տեխնիկական բնութագրին, այսինքն՝ արդյոք Պատվիրատուի անհրաժեշտ կարիքին համապատասխան ապրանք է ներկայացրել Ընկերությունը թիվ 1.1 Հավելվածով՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրով, թե ոչ:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**